*Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առաջդ կգա:*

# ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» BAREGORTS, հունվար - մարտ, 2025, № 1 (65), БАРЕГОРЦ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» (ԳՄՔԲԸՀ) գործունեությանը հաճախ ենք անդրադարձել մեր մամուլի էջերում: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, 1992 – 1997 թթ. արցախյան ազատամարտում ՊԲ հրամանատարի տեղակալ, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը հաղթանակից հետո պատմական Քաշունիքի տարածքում Քաշաթաղի շրջանի կազմավորման սկզբից ստեղծեց նշված հիմնադրամը, որը մինչ օրս աջակցում է արցախցի բազմազավակ ընտանիքներին:

Բացի բազմազավակ ընտանիքներին աջակցելուց՝ հիմնադրամը, հնարավորությունների սահմաններում, նաև իրականացնում է բարեգործական բազմաթիվ ծրագրեր և աջակցում անվճարունակ ուսանողներին՝ ամբողջությամբ կամ մասնակի վճարելով նրանց ուսման վարձը: Հիմնադրամը, նախքան վերջին ողբերգական իրադարձությունները, արցախցի բազմազավակ կարիքավոր ընտանիքներին օգնություն էր տրամադրում իրենց պատմական բնօրրանում՝ բացի սննդից և հագուստից՝ հատկացնելով խոշոր եղջերավոր անասուններ, որոշ ընտանիքներին էլ՝ նաև կենցաղային տեխնիկա (սառնարան, հեռուստացույց, լվացքի մեքենա և այլն):

2020 թ. պատերազմի հետևանքով բռնագաղթված քաշաթաղցիներին հիմնադրամն արդեն Հայաստանի Հանրապետությունում էր աջակցում՝ միաժամանակ օգնություն հասցնելով շրջափակման մեջ հայտնված Շուշիի շրջանի հինգ գյուղերի և մայրաքաղաք Ստեփանակերտի մեր հայրենակիցներին, ինչպես նաև Ստեփանակերտի «Արփեն մայր և նորածին» կենտրոնին, որտեղ ընդհանուր առմամբ ծնվել է 33759 երեխա:

2022 թ. սկսած, երբ փակվեց Լաչինի միջանցքը, և Արցախը հայտնվեց լիակատար շրջափակման մեջ, իսկ այնուհետև 2023-ից, երբ արցախցիները բռնագաղթվեցին հայրենի տնից և այժմ բնակվում են ՀՀ տարբեր մարզերում ու մայրաքաղաք Երևանում, փոխվել է հիմնադրամի գործունեության ուղղվածությունը. այժմ այն կենտրոնացել է ՀՀ-ում ապաստանած Արցախից բռնագաղթված բազմազավակ ընտանիքներին օգնելու վրա:

*Շնորհակալական ուղերձը հանձնվում է Ռահուլ Սինխին*

2024 թվականից հիմնադրամի հետ համագործակցում է կանադական մարդասիրական “Global Medic” կազմակերպությունը, որը օգնություն է ցուցաբերում աշխարհի տարբեր երկրներում պատերազմներից, երկրաշարժներից, ջրհեղեղներից ու այլ աղետներից տուժած կարիքավորներին:

Վերջերս Երևանում էին «Global Medic»-ի գործադիր տնօրեն Ռահուլ Սինխը, կազմակերպության անդամներ Թառա Կարսոնը, Ալ Մակլարենը և Շելի Թոմսոնը, ինչպես նաև կանադահայ հասարակական գործիչ Խորեն Մարդոյանը, ով բազմիցս եղել է Արցախում և մարդասիրական օգնություն ցուցաբերել, իսկ 2016-ից համագործակցում է «Global Medic»-ի հետ:

Հունվարի 20-ին տեղի ունեցավ Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցում էին նաև «Global Medic»-ի ներկայացուցիչները: Քննարկվեցին համատեղ կատարած աշխատանքների արդյունքները և հետագա անելիքները:

Իր ամփոփիչ խոսքում «Global Medic»-ի գործադիր տնօրեն Ռահուլ Սինխը բարձր գնահատեց ԳՄՔԲԸՀ-ի կատարած աշխատանքները և հավաստեց Արցախից բռնի տեղահանված բազմազավակ ընտանիքներին աջակցությունը շարունակելու պատրաստակամությունը:

Հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Մելիքյանը կարևորեց կանադացի բարեկամների համագործակցությունը, շնորհակալագիր հանձնեց Ռահուլ Սինխին:

Հունվարի 22-ին հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի նախկին դեկան՝

*Ռահուլ Սինխը Լիաննա Սաֆարյանի ընտանիքում*

պրոֆ. Արծրուն Ավագյանը, հոգաբարձուների խորհրդի անդամ, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նախկին դեկան, պրոֆեսոր Մարատ Գրիգորյանը և «Global medic”-ի ներկայացուցիչները՝ Ռահուլ Սինխի և Խորեն Մարդոյանի մասնակցությամբ այցելեցին ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք գյուղ, որտեղ 2023թ. սեպտեմբերի վերջերից բնակություն է հաստատել Արցախի Մարտակերտի շրջանի Կոճողոտ գյուղից Իշխան Սահակյանի և Լիաննա Սաֆարյանի բազմազավակ ընտանիքը: Այցելուները հետաքրքրվեցին այս ընտանիքի անցյալով ու ներկայի խնդիրներով: Ժամանակին իրենց գյուղում ամուսինները լավ տնտեսություն են ունեցել և ինը զավակներին պահել ու դաստիարակել: Այժմ Աղձքում բնակվում են վարձով, ունեն նյութական խնդիրներ: Բարերարների կողմից ընտանիքին հատկացվեց հերթական աջակցությունը՝ սննդի տեսքով:

*Արևիկ Գրիգորյանի և Էռնեստ Խոսրովյանի ընտանիքում*

Էռնեստ Խոսրովյանը՝ Արցախի Ճարտար քաղաքից և Արևիկ Գրիգորյանը՝ Հրազդանից, ծանոթացել էին միմյանց հետ Շուշիում վերաբնակվելու տարիներին, ամուսնացել: Հետագայում, արդեն բազմազավակ ընտանիքը տեղափոխվել էր Արցախի Քաշաթաղի շրջանի Հերիկ գյուղ: 2016թ.-ին այստեղ ծնված որդուն Ռոբերտ կոչեցին ի պատիվ 2016թ. ապրիլյան քառօրյայի անմահ Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյանի: Նրանց տանը հատուկ անկյուն էր նվիրված այդ օրերին անմահացած մյուս հերոսներին: 2020թ. պատերազմից հետո, երբ թշնամուն հանձնվեց Քաշաթաղի շրջանը, նրանց ընտանիքը տեղափոխվեց Երևան: Բայց Արցախը կանչում էր, ու շուտով արդեն Ճարտարում էին՝ Էռնեստի հայրական տանը: Երկար չտևեց խաղաղությունը. 2023-ի սեպտեմբերի վերջին Էռնեստը ավտոբուսով իր և հարևան ընտանիքներին տեղափոխեց Հայաստանի Հանրապետություն: Ինը երեխաներով ընտանիքը սկզբում բնակություն հաստատեց Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն, ապա՝ Կաթնաղբյուր գյուղերում: Կարիքներից ստիպված տեղափոխվեցին Երևան, սկզբում՝ Հաղթանակ թաղամաս, հետո՝ Նուբարաշեն: Կանադացի հյուրերը ծանոթացան նաև այս ընտանիքի պատմությանը, կենցաղային պայմաններին, տեղեկացան Ապրիլյան քառօրյայի հերոսների գործունեությանը:

Հաջորդ ընտանիքը, որ այցելեց խումբը, նախկինում բնակվում էր Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղում: Արմեն և Արմինե Բաղալյաններն ունեն 6 երեխա:

*Բաղալյանների ընտանիքում*

2020-ից տեղափոխվել և վարձով բնակվում են ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում: Ընտանիքի ծնողներն ունեն նաև առողջական խնդիրներ: Նրանց համար պատրաստված օգնությունը հանձնելուց հետո՝ արդեն հունվարի 25-ին,«Global medic”-ի կամավորները ԳՄՔԲԸՀ հոգաբարձ հոգաբարձության խորհրդի անդամների հետ այցելեցին ՀՀ Արմավիրի մարզ:

Էջմիածնի տարածաշրջանի Շահումյան գյուղում է բնակվում Բերձորից տեղափոխված Քրիստինե Ամյանի 12 երեխաներով ընտանիքը, որին հատկացվեց հասանելիք սնունդը: «Global Medic»-ի ներկայացուցիչները ծանոթացան ընտանիքի պատմությանը, ներկա խնդիրներին:

*Քրիստինե Ամյանի ընտանիքում*

Երեխաները ստացան նաև հիմնադրամի լավագույն բարեկամ, ամերիկահայ Դայանա Պարսամի կողմից ուղարկված ամանորյա նվերները:

Արմավիրի մարզի Գետաշեն գյուղում են բնակվում Արցախից բռնի տեղահանված ԳՄՔԲԸՀ-ի շահառու երեք

*Օրդուբեկյանների ընտանիքում*

բազմազավակ ընտանիք: Սամվել Օրդուբեկյանի և Ժենյա Թովմասյանի բազմազավակ ընտանիքը բնակվելիս է եղել Քաշաթաղի շրջանի Սոնասար գյուղում, այնուհետև՝ Բերձոր քաղաքում: 2020-ից հետո նրանք տեղափոխվել էին Ստեփանակերտ: 2023թ.-ի սեպտեմբերին տեղի ունեցած բռնի տեղահանությունից եկան Երևան, այժ, բնակվում են Գետաշեն գյուղում: Նրանց որդիներից Արայիկ Օրդուբեկյանը զոհվել է 2016թ. սեպտեմբերի 2-ին՝ Արցախի սահմանները պաշտպանելիս:

Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղից այստեղ բնակություն է հաստատել նաև Միհրան Դանիելյանի և Օֆիկ Առաքելյանի՝ չորս երեխաներով ընտանիքը: Ունեն բնակելի պայմանների բարելավման խնդիր:

Գրիգոր Բաղդասարյանը և Օվսաննա Սարդարյանն ունեն հինգ երեխա, որոնցից Էմիլին վերջերս է ծնվել:

*Միհրան Դանիելյանի և Օֆիկ Առաքելյանի ընտանիքում*

Բռնագաղթվել են 2020-ի նոյեմբերին Արցախի Շահումյանի շրջանի Բազ գյողից, վերաբնակվել են սկզբում՝ Վանաձոր, այնուհետև՝ Մեծամոր քաղաքներում, և վերջապես Արմավիրի Գետաշեն շրջան:

*Գրիգոր Բաղդասարյանի և Օվսաննա Սարդարյանի ընտանիքում*

Ընտանիքը նույնպես բնակարանային պայմանների բարելավման խիստ կարիք ունի: Բոլոր ընտանիքներին բարերարների կողմից հատկացվեց նախատեսված սնունդը, իսկ երեխաները ստացան ԱՄՆ-ում բնակվող հիմնադրամի լավագույն բարեկամի՝ Դայանա Բարսամի կողմից ուղարկված ամանորյա նվերներ: ԳՄՔԲԸՀ-ի գործադիր տնօրեն Գ. Մելիքյանը հետաքրքրվեց կարիքավորների խնդիրներով և խոստացավ հնարավորության սահմաններում լուծել դրանք: ԳՄՔԲԸՀ-ի աջակցությունը Հայաստանում Արցախից բռնագաղթված շահառու ընտանիքներին շարունակական է:

ԶՈՀՐԱԲ ԸՌՔՈՅԱՆ

## Global Medic from Canada is here with us

With many of the recent developments in the region making life increasingly difficult for the people of Kashatagh region of Artsakh, the Gurgen Melikyan Multichildren Family Foundation has remained deeply committed to its mission. Rooted in the support of our dedicated donors and partners, we continue our efforts to make life just a little bit easier for the forcibly displaced. Through our collective work, we strive to provide relief, hope, and sustainability to families who have faced unimaginable hardship.

Among our many esteemed partners, one organization stands out for its dedication and hands-on approach—GlobalMedic from Canada. Unlike many others, they did not simply offer assistance from afar. Instead, they traveled to Armenia with us, immersed themselves in the culture, and actively participated in our relief efforts. Their involvement was not just about delivering aid; it was about building relationships, understanding the struggles firsthand, and making a lasting impact.

Throughout their visit, we had the opportunity to introduce the Global Medic team to numerous families in need. Many of these encounters were shared across our social media platforms, allowing supporters worldwide to witness the resilience of these families and the challenging conditions they endure. It was crucial for us to highlight their stories—not just as victims of displacement but as strong, dignified individuals striving to rebuild their lives despite adversity.

The GlobalMedic team took extraordinary measures to ensure their contributions made a meaningful difference. They allocated time, resources, and traveled across continents to extend their support. Their commitment went beyond a one-time act of charity; it was a testament to their solidarity with our cause. Dozens of families received critical aid, including essential food supplies such as wheat, grains, and other staple items—simple yet vital provisions that many of us take for granted. These supplies helped alleviate some of the daily burdens these families face, allowing them to focus on restoring a sense of normalcy to their disrupted lives.

One of the most remarkable aspects of Global Medic's involvement was their genuine connection with the people they served. They met multichildren families struggling with food insecurity, economic instability, and the psychological toll of displacement. By witnessing these hardships firsthand, they gained a deeper understanding of the urgency of our work. Their dedication was not just about providing immediate relief but also about fostering sustainable solutions that could have a long-term impact on the community.

This year, we had the privilege of meeting with Rahul Singh, the founder and executive director of Global Medic. Engaging in discussions with him was truly inspiring, as he shared visionary ideas for sustainable development. His insights reinforced the importance of creating long-lasting resources that extend beyond temporary aid. Through his leadership, Global Medic has continuously emphasized innovative approaches to humanitarian assistance, and we are honored to have such an esteemed partner in our mission.

During our discussions, we explored ways to establish initiatives that not only address urgent needs but also empower the displaced families with sustainable opportunities. This includes programs focused on agricultural development, vocational training, and community-driven projects that can provide long-term stability. We strongly believe that fostering self-reliance is just as crucial as providing immediate assistance, and through partnerships like the one we have with Global Medic, we are making strides toward that goal.

The importance of international solidarity in times of crisis cannot be overstated. When organizations from different parts of the world come together, driven by a shared purpose, the impact becomes exponentially greater. The bond between the Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh and Global Medic is built on mutual respect, dedication, and an unwavering commitment to humanitarian principles. Together, we have witnessed the power of collective action, and we remain steadfast in our pursuit of a better future for the people of Kashatagh.

As we look ahead, our commitment to this cause remains resolute. The Foundation will continue to stand by the people of Kashatagh, advocating for their rights, providing essential aid, and working toward long-term solutions that promote stability and peace. With the support of our global brethren, we firmly believe that a future marked by resilience, security, and prosperity is within reach.

Our work does not end here. The challenges faced by displaced families require ongoing efforts, and we call upon compassionate individuals and organizations worldwide to join us in this mission. Whether through financial contributions, volunteering, or spreading awareness, every effort counts. Together, we can ensure that those affected by conflict and displacement do not remain forgotten.

The journey ahead may be arduous, but with unwavering dedication and the support of partners like Global Medic, we will continue to make a tangible difference in the lives of those who need it most. The stories of the families we have helped serve as a reminder of why we do this work. They are the reason we persist, and they are the reason we remain hopeful.

Through collaborative efforts, compassionate action, and a steadfast belief in a brighter future, the Foundation reaffirms its promise to the people of Kashatagh. With each initiative, each partnership, and each act of kindness, we move closer to a world where peace, stability, and dignity are not just ideals, but realities for all.

David Melikyan, Foundation's SMM

## ԳԱՈՒՍ–ը՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» համար

*Գուրգեն Մելիքյանը և Ալեքսանդր Գրիգորյանը հուշագիր ստորագրելիս*

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկն ամանորյա բարեգործական ցուցահանդես-տոնավաճառից գոյացած հասույթի մեծ մասը, որը հավաքագրվել է ԳԱՈՒՍ–ի աշխատակիցների կողմից, տրամադրել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին հիմնադրամին»:

Հավաքագրված միջոցները հանձնելու համար Հիմնարկի տնօրեն Ալեքսանդր Գրիգորյանը հյուրընկալել էր Հիմնադրամի նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի բազմամյա դեկան Գուրգեն Մելիքյանին և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի բազմամյա դեկան, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Արծրուն Ավագյանին:

Տնօրենը շնորհակալություն է հայտնել Հիմնադրամին ծավալած գործունեության համար և մաղթել, որ այդ գործունեությունը դեռ երկար տարիներ շարունակի իր ընթացքը:

«Ես հույս ունեմ, որ մենք ամեն տարի Հայոց բանակի տոնի նախօրեին հանդիպելու ենք այստեղ և մեր ներդրումն ենք ունենալու Ձեր ազգանվեր գործում»,– ասել է Ա. Գրիգորյանը:

*Հուշագիրը ստորագրելուց հետո*

Հիմնադրամի նախագահն ու ՀԽ նախագահը պատմել են բռնի տեղահանված արցախահայության կյանքի բարելավմանն ուղղված իրենց գործունեության մասին և նշել, որ յուրաքանչյուր նվիրաբերություն հասնում է իր նպատակին:

Հանդիպումից հետո Հիմնարկի տնօրենը հյուրերին ուղեկցել է դահլիճ, որտեղ համալիրի սաները միջոցառում էին պատրաստել Հայոց բանակի տոնի առթիվ:

## 2025թ. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

| Հ/հ | Ամսաթիվ | ԲՈՒՀ | Նպատակ | Գումար |
|---|---|---|---|---|
| 1 | 27/02/25 | ՀՊՑՀ հիմնադրամ | Նուրբեկյան Ինեսա, մարքեթինգի և բիզնեսի կառավարման ֆակ 1-ին կ. | 200000 |
| 2 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Ավագյան Սուրեն, թյուրքագիտ. 3-րդ կուրս | 150000 |
| 3 | 27/02/25 | Վ.Բրյուսովի անվան համալսարան | Ղազարյան Մարինա, անգլ-հայերեն թարգմանչություն 2-րդ կուրս | 80000 |
| 4 | 27/02/25 | Հերացու անվան ԵՊԲՀ | Հարությունյան Աննա, էնդոկրինոլոգիա, 1-ին կուրս կլինոորդինատուրա | 100000 |
| 5 | 27/02/25 | Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ | Սամսոնյան Էլեն, գեղարվեստ 2-րդ կուրս | 150000 |
| 6 | 27/02/25 | Վ.Բրյուսովի անվան համալսարան | Դավթյան Թագուհի, ՄՀՔՖ 4-րդ կուրս | 150000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | 27/02/25 | ՀԱԱՀ Սիսիանի մ/ճ | Իսրայելյան Դիանա, մենեջմենթ 2-րդ կուրս | 100000 |
| 8 | 27/02/25 | ՃՇՀԱՀ հիմնադրամ | Մեջլումյան Տիգրան, շինարարություն 3-րդ կուրս հեռակա | 100000 |
| 9 | 27/02/25 | ՃՇՀԱՀ հիմնադրամ | Մկրտչյան Ժան, դիզայն 1-ին կուրս հեռակա | 80000 |
| 10 | 27/02/25 | ԵԹԿՊԻ Գյումրու մ/ճ | Մուրադյան Ռոբերտ, ռեժիսուրա 4-րդ կուրս | 105000 |
| 11 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Ավետիսյան Անի, ԻԿՄ 3-րդ կ. | 200000 |
| 12 | 27/02/25 | ՀԱՊՀ հիմնադրամ | Սիմոնյա Էդգար, արհեստական բանական 2-րդ կ. | 200000 |
| 13 | 27/02/25 | Մեհրաբյանի անվ բժշկ քոլեջ | Ճեկյան Սրբուհի, քույրական գործ 2-րդ կուրս | 100000 |
| 14 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Վիրաբյան Եվա, սերվիս 3-րդ կ. | 60000 |
| 15 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Ալեքսանյան Կրիստինա, սփյուռքագիտություն մագիստր 2-րդ կուրս | 100000 |
| 16 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Քեխյան Արմեն, տնտեսագիտ 3-րդ կուրս | 120000 |
| 17 | 27/02/25 | ՀԱՊՀ հիմնադրամ | Ավանեսյան Արփինե, տնտեսագիտ. 1-ին կուրս | 150000 |
| 18 | 27/02/25 | ՃՇՀԱՀ հիմնադրամ | Ոսկանյան Լուսինե, դիզայն մագիստր 1-ին կուրս | 150000 |
| 19 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Ղուկասյան Միլենա, կիրառ.արաբագիտ մագիստր. 2-րդ կուրս | 120000 |
| 20 | 27/02/25 | Երևանի ինֆորմատիկայի պետ. քոլեջ | Ոսկանյան Հայկ, վեբ.դիզայն 2-րդ կուրս | 100000 |
| 21 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Թամոյան Գյուլփերի, դեղագործ.քիմիա 2-րդ կուրս | 100000 |
| 22 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Միրաքյան Կարեն, իրավագիտ 2-րդ կուրս | 100000 |
| 23 | 27/02/25 | ՀԱԱՀ հիմնադրամի քոլեջ | Հաջաթյան Վանիկ, ջերմատնային տնտես. 1-ին կուրս | 120000 |
| 24 | 27/02/25 | Մ.Խորենացու անվան համալսարան | Մկոյան Ալբերտ, կիրառ.մաթեմ և ինֆորմատիկա 2-րդ կուրս | 100000 |
| 25 | 27/02/25 | Հյուսիսային համալսարան հիմնադրամ | Համբարձումյան Գրիգոր, իրավագիտ. 4-րդ կուրս | 100000 |
| 26 | 27/02/25 | ՃՇՀԱՀ հիմնադրամ | Մինասյան Մարիամ, Դ-12-1 խումբ | 150000 |
| 27 | 27/02/25 | Ճգնաժամային կառ.պետ.ակադեմիա | Ավագյան Լորիկ, քաղ. պաշտպանություն 4-րդ կուրս | 150000 |
| 28 | 27/02/25 | ՀԱՊՀ հիմնադրամ | Բայաթյան Սեյրան, էլ.էն.ինստիտուտ 4-րդ կուրս հեռակա | 150000 |
| 29 | 27/02/25 | Եվրասիա միջազգային համալսարան | Գրիգորյան Տիգրան, կառավարում, 3-րդ կուրս | 150000 |
| 30 | 27/02/25 | Հայաստանում ֆրանսիական համալսարան | Թադևոսյան Նարե, իրավ. 3-րդ կուրս | 150000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 31 | 27/02/25 | ՀՊՏՀ հիմնադրամ | Օգանեսյան Կարինե, շուկայագիտություն 2-րդ կ., հեռակա | 100000 |
| 32 | 27/02/25 | ԵՊՀ հիմնադրամ | Ասլանյան Հայկանուշ, ԵԼՀ թարգմանչական գործ 4-րդ կ. | 100000 |
| 33 | 27/02/25 | Հայկական բժշկական ինստիտուտ | Դեմուրչյան Պարույր, ստոմատոլոգիա 3-րդ կուրս | 100000 |
| 34 | 18/03/25 | Խմբակ-բացառություն | Նավասարդյան Սերինե | 50000 |
| 35 | 18/03/25 | Խմբակ -բացառություն | Դանիելյան Նուբար | 50000 |
| 36 | 04/04/25 | ԵՊՀ հիմնադրամ | Խաչադուրյան Քրիստինե, իրանագիտ.4-րդ կուրս /բացառություն/ | 175,000 |

**Ընդամենը՝ 4,360,000.00**

## ԼՐԱՑԱՎ ԳՐԱԿԱՆԱԳԵՏ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ 80 - ԱՄՅԱԿԸ

Լրացավ անվանի գրականագետ, բանասիրական գիտ. դոկտոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի բազմամյա դասախոս, նույն ամբիոնի երկարամյա վարիչ, այժմ՝ պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, մեր հիմնադրամի հնագույն անդամ, «Բարեգործ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Սամվել Պարգևի Մուրադյանի ծննդյան 80-ամյակը: Նա իր կյանքի տարիներից շուրջ 60-ը նվիրել է հայոց մայր բուհին՝ գիտությանը, գրականությանը և սերունդներ կրթելու հայրենանվեր գործին, իսկ վերջին երեսուն տարիները՝ նաև Արցախի շենացման սուրբ գործին:

Ս. Պ. Մուրադյանը ծնվել է 1945 թ. հունվարի 20-ին ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք (նախկինում՝ Ձորափ) գյուղում՝ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Արծկե քաղաքից 1915 թ. Ցեղասպանության հետևանքով բռնագաղթած մտավորականի ընտանիքում:

Ավարտելով ծննդավայրի միջնակարգ դպրոցը՝ 1964 թ. Ս. Մուրադյանն ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ: Մասնագիտական կողմնորոշման մեջ որոշիչ նշանակություն են ունենում ոչ միայն ընտանեկան մթնոլորտն ու անձնական նախասիրությունները՝ բացառիկ սերը հայ գրականության նկատմամբ, այլև 1960-ական թթ. ազգային զարթոնքի երևանյան շիկացած մթնոլորտը և մանավանդ մտերմությունը բանաստեղծ Հ. Շիրազին, ով շուրջ քառորդ դար (1961-1984 թթ.) եղավ Ս. Մուրադյանի հոգեհարազատ բարեկամներից, ուսուցիչներից և ընկերներից մեկը: Ստանալով բանասերի՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում՝ 1969 թ. Ս. Մուրադյանը աշխատանքի է անցնում ԵՊՀ հայագիտական կենտրոնում, որպես հայցորդ գրանցվում սովետահայ գրականության պատմության ամբիոնում:

1969-72 թթ. նա՝ որպես համալսարանի հայագիտական կենտրոնի աշխատակից, անմիջական մասնակցություն է ունենում հայագիտական մի շարք կարևոր գրքեր տպագրության պատրաստելու գործում: 1972-ից Ս. Մուրադյանը ստանձնում է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու քարտուղարի պաշտոնը և մինչև 1985 թ. խմբագրակազմի հետ տպագրում այդ հեղինակավոր պարբերականի շուրջ 50 համար: 1986 թ. խմբագրում է պրոֆ. Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Բախշյանի և Հովի. Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» Ա հատորը:

Այդ ընթացքում են ճշգրտվում ու դրսևորվում Ս. Մուրադյանի գիտական հետաքրքրությունները և որոշակիանում վերաբերմունքը նախասիրած հեղինակների հանդեպ: Առաջնեկը Հարություն Սուրխաթյանն էր՝ 20-րդ դարի մինչև չարաբաստիկ 1937 թ. ամենից հեղինակավոր գրականագետներից ու քննադատներից մեկը, ում ծառայությունները հատկապես մեծ են ընթացիկ գրականության՝ Չարենցի, Բակունցի, Մահարու ստեղծագործությունների գնահատման, գրականության դասավանդման նոր սկզբունքների արմատավորման, ինչպես նաև դասական հայ և համաշխարհային գրողների հանրայնացման գործում: 1984 թ. պաշտպանելով «Հարություն Սուրխաթյան» ատենախոսությունը՝ Ս. Մուրադյանն ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, որը հաստատում է Մոսկվան: Ատենախոսությունը՝ որպես մենագրություն, տպագրվեց 1988 թ.:

ԵՊՀ նախապատրաստական ֆակուլտետում տարիներ շարունակ հայոց լեզու և գրականություն ուսուցանելուց հետո Ս. Մուրադյանը 1984 թ. դասախոսական աշխատանքի է անցնում հայ գրականության ամբիոնում: Զուգակցելով մանկավարժական և գիտական գործունեությունը՝ շուտով ստանում է դոցենտի կոչում:

1992 թ. Ս. Մուրադյանին հրավիրում են Երուսաղեմ, ուր նա երկու տարի տեղի Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում դասավանդում է հայ գրականություն և Նոր կտակարան: Տարիներ շարունակ և, մասնավորապես, գործուղման ընթացքում, նա Երուսաղեմի Գյուլբենկյան մատենադարանում ուսումնասիրում է մեծ երգիծաբան Երվանդ Օտյանի կյանքն ու ստեղծագործությունը և 1994 թ. վերադառնալով՝ իր հետ բերում արդեն ավարտած «Երվանդ Օտյան. կյանքը և ստեղծագործությունը» ուսումնասիրությունը, որը պաշտպանում է 1995 թ. և

ստանում բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Ատենախոսությունը՝ որպես մենագրություն, տպագրվել է 1996, լրամշակված տարբերակը՝ 2012 թ.:

2001թ. Ս. Մուրադյանն անդամակցում է Հայաստանի գրողների միությանը, այնուհետև դառնում նրա վարչության անդամ: Անմնացորդ եռանդով մասնակցում է հանրապետության գիտական ու գրական-մշակութային կյանքին, հայ գրականության տարաբնույթ խնդիրների մասին գիտական զեկուցումներով հանդես գալիս միջազգային ու հանրապետական գիտաժողովներում, հրապարակային բանախոսություններով՝ Երուսաղեմում, Բեյրութում, Թբիլիսիում, Հալեպում, Թեհրանում, Սպահանում, ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում: Թեհրանում և Սպահանում 2008 թ. նա վարել է Իրանի հայկական դպրոցների 75 ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

2001-2021 թթ. Ս. Մուրադյանը եղել է ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչը: 2003 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Այժմ նա ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ է, մայր բուհի հայ բանասիրության ֆակուլտետի ականավոր դասախոսներից, որին սիրով են ունկնդրում ուսանողական տարբեր սերունդները:

Ս. Մուրադյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում է հայ գրականությունն իր գրեթե բոլոր դրսևորումներով՝ հնից ու միջնադարյանից սկսած մինչև նոր ու նորագույն: Ավելի քան 130 գիտական ու գիտամեթոդական հոդվածների և ուսումնասիրությունների, տասնմեկ մենագրությունների, ուսումնական ձեռնարկների հեղինակ է, որոնցից, բացի վերը հիշատակվածներից, առավել կարևոր են Երվանդ Օտյանին և Հովի. Շիրազին նիրվածները («Հովհաննես Շիրազ: Բանաստեղծը, Մարդը», գիրք Ա, Եր., 2012, գիրք Բ, Եր., 2015), որոնցում գրականագետը ներկայացրել է իր ճանաչած և հոգեկից Հովի. Շիրազին և բնութագրել նրա կյանքն ու ստեղծագործությունԱյդ մենագրությունն արժանացել է ՀԳՄ «Նիկոլ Աղբալյան» գրական մրցանակին:

Հայ գրականագիտության մեջ կարևոր ներդրում են Ս. Մուրադյանի «Գրական հանգրվաններ» շարքի հինգ հատորները (գիրք Ա, Եր., 2003, գիրք Բ, Եր., 2007, գիրք Գ, Եր., 2010, գիրք Դ, Եր., 2021, գիրք Ե, Եր., 2025): Դրանք պատկերացում են տալիս նրա ընդգրկուն հայացքի և գիտական լայն հետաքրքրությունների մասին: Այս հատորներում նոր մեկնաբանությամբ լուսաբանվում են հայ գրականության պատմության տարբեր շրջափուլերի, գրողների ու նրանց ստեղծագործությունների վերաբերյալ տարաբնույթ խնդիրներ:

Պրոֆ. Ս. Մուրադյանը Հայաստանի անկախացումից հետո առաջինն է հանրապետության բուհերի ուսանողության համար ստեղծել հայ նոր գրականության պատմության բուհական դասագիրք (Ա հատորը լույս է տեսել 2021-ին, Բ և Գ հատորները շարադրման ընթացքում են), որի էջերում արդի գրականագիտության դիրքերից հայ նոր գրականության հիմնախնդիրները, գրողներն ու նրանց երկերը ներկայացված են թարմ հայացքով և նորովի վերլուծությամբ:

Ընդհանրապես իր աշխատություններում Ս. Մուրադյանը բազմադարյա հայ ազգային գրականությունն ուսումնասիրել է նոր՝ գրական ազգակցության տեսանկյունից՝ համաշխարհային գրական մտքի զարգացման խորապատկերում, և հայ գրողների լավագույն գործերը ներկայացրել է յուրատիպ վերլուծություններով:

Հաճախ է Ս. Մուրադյանը Հայաստանի ռադիոյով ու հեռուստատեսությամբ հանդես գալիս Նարեկացուն, Սայաթ-Նովային, Աբովյանին, Պեշիկթաշլյանին, Ջիվանուն, Թումանյանին, Եր. Օտյանին, Շանթին, Իսահակյանին, Սիամանթոյին, Չարենցին, Շիրազին, Պ. Սևակին և այլ հեղինակներին նվիրված բովանդակալից ելույթներով: Բազմաթիվ գիտական ու գեղարվեստական գրքեր են լույս տեսել նրա խմբագրությամբ և ուղղորդող առաջաբաններով: Վերջերս տպագրվածներից առավել կարևոր են Դ. Գասպարյանի «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը» մեծածավալ հանրագիտարանային գիրքը (Եր., 2022) և «Համո Սահյան» մենագրությունը (Եր., 2023):

Պրոֆ. Ս. Մուրադյանը Հովի. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի երկերի ակադեմիական հրատարակությունների խմբագրակազմի եռանդուն անդամն է, Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի տասհատորյակի վերահրատարակության 5-րդ հատորի (Եր., 2022) գլխավոր խմբագիրը:

Մեծ ներդրում ունի նա հատկապես Հովի. Շիրազի անտիպ ձեռագրերի հրատարակման գործում: Նշանակալից են հատկապես «Անի» (Եր., 2011), «Թոնդրակեցիները» (Եր., 2014) պատմափիլիսոփայական պոեմները: Իսկ «Հայոց դանթեականը» դատաստանամատյան-պոեմի ամբողջական հրատարակությունը նա իրականացրել է ձեռագրերի, վեց մեքենագիր տարբերակների և 1989թ.տպագրվածի համադրությամբ ու համեմատությամբ, գլավլիտի և խմբագիրների կրճատած հատվածների, դրանց մի մասի հիշողությամբ վերականգնումով (Եր., 2021): Հ. Շիրազի կազմած «Հատընտիրը» (2012), «Հուշարձան հայրիկիս» (Եր., 2017), «Անտիպ էջեր» խորագրով հինգ հատորները (գիրք Ա, Եր., 2018, գիրք Բ, Եր, 2019, գիրք Գ, Եր., 2020, գիրք Դ, Եր., 2023, գիրք Ե, Եր., 2025): Ս. Մուրադյանի կազմած ու խմբագրած գրքերից են՝ նրա իսկ ընդարձակ առաջաբաններով ու ծանոթագրումներով: Ս. Մուրադյանը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, ՀՀ Ազգային գրադարանի, Խ. Աբովյանի, Հովի. Թումանյանի տուն-թանգարանների, Գյումրու Հովի. Շիրազի հուշատուն-թանգարանի, Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհուրդների անդամ է, ՀԳՄ միության և նրա վարչության անդամ, ԵՊՀ և ՀՊՄՀ հայագիտական հանդեսների, ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» և «ՎԷՄ» համահայկական հանդեսի խմբագրակազմի անդամ: Տարիներ շարունակ նա եղել է ՀՀ նախագահի պետական մրցանակ շնորհող հանձնախմբի անդամ, իր իմացություններն ու հմտությունները դրսևորել 2009 և 2019թթ ԵՊՀ 90 և 100-ամյակների առթիվ հրատարակված «Կենսագրական հանրագիտարանի» խմբագրական խորհրդի կազմում աշխատելիս:

Մեծ է նրա ավանդը նաև գիտական երիտասարդ կադրերի պատրաստման գործում. ավելի քան երկու տասնամյակ նա հաջողությամբ գլխավորել է ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնը՝ լինելով համալսարանի հիմնադրումից ի վեր չորրորդը՝ Ա. Տերտերյանից, Մ. Մկրյանից և Հր. Թամրազյանից հետո, ղեկավարել է շուրջ երկու տասնյակ ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունները, եղել բազմաթիվ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս: ԵՊՀ-ում որոնող՝ ԲԿԳԿ-ի «Գրականագիտություն 012» մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է, երկար ժամանակ եղել է և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող 003 աստիճան շնորհող խորհրդի անդամ:

Երկարամյա աշխատանքի մեջ առանձին տեղ է զբաղեցնում Ս. Մուրադյանի հանրային գործունեությունը: Նա ոչ միայն եռանդով մասնակցում է հանրապետության գրական-մշակութային ու գիտական միջոցառումներին, այլև ամենից հաճախ է լինում մայրաքաղաքի և հանրապետության տարբեր վայրերի, նաև՝ մարզերի մշակութային կենտրոններում, սահմանամերձ գյուղերի դպրոցներում՝ կենդանի կամուրջ դառնալով դպրոցի և համալսարանի միջև և էական դեր խաղալով աշակերտների մասնագիտական կողմնորոշման մեջ:

Հ.Գ.Մ Սուրեն Քոչարյանի անվան ասմունքի խմբի (ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյան ) գեղարվեստական գլխավոր խորհրդատուն է: 1997 թ. Բեյրութում զեկուցումով հանդես է եկել Եղ. Չարենցի 100-ամյակի հոբելյանական հանդիսությանը, 2015 թ.՝ տեղի Ահրամյան վարժարանի դահլիճում բանախոսել Սայաթ-Նովայի մասին և Արամ Ա վեհափառի հրավերով 2019 թ. վարել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի հայագիտական դասընթացները: 2005-ին նա հրավիրվել է Հալեպ՝ Նազարյան սրահում տեղի հայության առջև Հովհ. Շիրազի ծննդյան 90 և Պ. Սևակի 80-ամյակների առթիվ բանախոսելու, 2006-ին հանդես է եկել հայ գրականության մասին 14 հրապարակային բանախոսություններով:

Տասնմեկ տարի շարունակ Ս. Մուրադյանը եղել է ՀՀ Ազգային ժողովի և յոթ տարի՝ Շուշիում ամերիկահայ բարերարների կազմակերպած համահայկական ասմունքի մրցույթ-փառատոների գնահատող հանձնախմբերի կազմում և, որպես գլխավոր բանախոս, հազարավոր մասնակիցների առջև Հայաստանում և Շուշիում հանդես եկել հայ գրականության մասին տպավորիչ ելույթներով:

Այժմ էլ նա լի է երիտասարդական ավյունով, իր մեծ կենսափորձով, անմնացորդ նվիրումով նպաստում է նաև Գյումրու «Շիրակ» համալսարանի, Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարանի և Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի բովանդակալից ու նպատակասլաց գործունեությանը:

Պրոֆ. Ս. Մուրադյանի գործունեության նվաճումները գնահատված են ՀՀ մրցանակներով ու պարգևներով: Նշենք կարևորագույնները. 2008 թ.՝ Ֆրիտյոֆ Նանսենի մեդալ, 2009 թ.՝ ՀՀ ԿԳ նախարարության Ոսկե հուշամեդալ, 2012 թ.՝ ՀԳՄ «Գրական վաստակի համար» ոսկե մեդալ, 2012 թ.՝ ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալ, 2013 թ.՝ ՀՀ Ազգային ժողովի պատվոգիր՝ ասմունքի հանրապետական մրցույթ-փառատոնի կայացման գործում մեծ ավանդ ունենալու համար, 2014 թ՝. ՀՀ վարչապետի Ոսկե հուշամեդալ, 2015 թ.՝ ՀՀ Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալ, 2016 թ.՝ ԵՊՀ Ոսկե մեդալ, 2016 թ.՝ «Հովհաննես Շիրազ» հուշամեդալ, 2018 թ.՝ Հավաստագիր՝ Շուշիում կազմակերպված համահայկական ասմունքի յոթերորդ փառատոնի գնահատող ժյուրիի կազմում աշխատելու համար:

2014 թ. Ս. Մուրադյանն արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման և վերջերս, ծննդյան 80 –ամյակի առթիվ ԵՊՀ գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ նրան ներկայացրել է ՀՀ կառավարության բարձրագույն պարգևներից մեկով՝ Մովսես Խորենացու մեդալով պարգևատրման: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» իր ու Արցախ աշխարհի, Ս. Մուրադյանին ճանաչող բոլոր մարդկանց անունից ջերմորեն շնորհավորում է մեծավաստակ գիտնական-մանկավարժի, Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի անդամի, բարեգործական ծրագրերի իրականացնողներից մեկի, ազնիվ ու շիտակ հայ մտավորական Սամվել Մուրադյանի 80-ամյակը, մաղթում քաջառողջություն, գիտակրթական բեղմնավոր գործունեություն և ընտանեկան երջանկություն:

---

## Ռուզաննա և Սյուզաննա Աղաբաբյանների այցը Տավուշի մարզի մանկապարտեզ

*Ռուզաննան և Սյուզաննան հանձնեցին նվերները երեխաներին*

«Այն, ինչ տվեցիր քոնն է հավիտյան՝ այն, ինչ պահեցիր կորած է հավերժ»:Պողոս առաքյալի այս խոսքով մշտապես է առաջնորդվում Հայ լեզվաբան, արևելագետ, իրանագետ, հասարակական գործիչ, պրոֆեսոր, բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի գնդապետ (1996), պարոն Գուրգեն

Մելիքյանը: Մարդ, ով օրինակ է իրական, անսուտ, ճշմարիտ արժեհամակարգ կրող Հայի: Մարդ, ով հաստատապես բազմիցս փաստել է այս խոսքով մշտապես ապրելու, գործելու իրողությունն ու իրականությունը: Մարդ, ում ժամանակակիցը լինելը պատիվ, անսահման պատասխանատվություն և մեծ երջանկություն է, և մենք այդ երջանիկներից ենք: Ինչպես արդեն նշել եմ իմ նախորդ հրապարակումներում, պարոն Մելիքյանին անձնապես ճանաչելու առիթ ու պատիվ ենք ունեցել «Սրբազան պայքարի» ընթացքին, օրերս էլ հյուրընկալվել էինք իր մոտ: Ջերմ, անմոռանալի ու ոգևորիչ զրույցի ընթացքում խոսեցինք նաև մեր գյուղի մասին՝ պարոն Մելիքյանն ասաց.

– Իսկ Ձեր գյուղում մանկապարտեզ կա՞:

– Իհարկե կա, երկու մանկապարտեզ ունենք:

– Հիանալի է, դե այդ դեպքում, այս փաթեթները ձեզ հետ տարեք, գոնե մանկապարտեզի սաներին ուրախություն

կպարգևեք... Երեխեք ջան իմ խոսքը գործ է... դուք համարեք, որ ես ձեր պապիկն եմ:
– Մենք այդպես էլ համարում ու զգում ենք հավատացած եղեք, իսկ փաթեթները անպայման կփոխանցենք

*Աղաբաբյանները Մանկապարտեզում*

փոքրիկներին, մեծ պատասխանատվությամբ ու սիրով:

Այսօր արդեն, ըստ պայմանավորվածության, ես ու քույրս Ռուզաննան այցելեցինք մեր գյուղի՝ Տավուշի մարզի, Նոյեմբերյան խոշորացված համայնքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ և, թվով 40 սաներին փոխանցեցինք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից պատրաստված նվերները: Փոքրիկ փաթեթներ, որոնց մեջ անհատնում սեր ու ջերմություն կար:

Ուշադրություն, որից շոյված էին, և տնօրենը, և աշխատակիցները, իսկ երեխաների խանդավառ, հետաքրքրասեր աչուկները վկայում էին, որ նրանք իսկապես այդ տուփերի հետ տանում են պատմության փոքրիկ մի չափաբաժին, որ անպայման կպատմեն իրենց ընտանիքի անդամներին: Պատմություն, Գուրգեն պապիկի ու երկու աղջիկների մասին, ովքեր այսօր իրենց էին այցելել: Եվ այո, վերստին փաստում ու համոզվում ենք, այն ճշմարտության մեջ, որ այո, անհրաժեշտ է մշտապես լինել բարու սերմնացաններն այս մեր կարճ կյանքում:

---

## *Արցախյան պատերազմներին մասնակցած հաշմանդամ զինվորների և կամավորների՝ հիմնադրամին հասցեագրված շնորհակալական նամակներից*

### *Նամակ չորրորդ*

*Ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ այն վստահության համար, որ ներշնչել եք ինձ կրթության և ապագայի հանդեպ: Ձեր առաջնորդությամբ և աջակցությամբ ես կարողացա հավատալ իմ ուժերին և նպատակաուղղված քայլեր ձեռնարկել SS ոլորտում իմ տեղը գտնելու համար: Ես՝ Ալբերտ Մեյրոյանս, ծնվել եմ 2001 թվականի նոյեմբերի 8-ին Երևանում: Զբաղվել եմ լողով և ըմբշամարտով: 2016-ին ընդունվել եմ ԵՊԲՀ-ի քոլեջի Ռազմաբժշկական ֆակուլտետ: Ավարտելուց հետո՝ 2020-ի օգոստոսին զորակոչվել եմ բանակ՝ ծառայության անցնելով ՀՀ Զինված ուժերի Ճամբարակի զորամասում: Օրեր անց տեղափոխվել եմ Արցախ՝ Մատաղիսի զորամաս: Ընդամենը տասնվեց օր էր անցել, որ այս զորամասում էի, երբ սկսվեց 44-օրյա պատերազմը: Հոկտեմբերի 2-ին դեպի Մարտակերտ ուղևորվող մեքենան պայթեցվում է, մեքենայում գտնվող յոթ հոգուց չորսը մահացան, ես ծանր վիրավորվեցի: Հետագայում՝ գիտակցության գալուց հետո, իմացա, որ փրկվել եմ ավտոմեքենայում ողջ մնացածներից մեկի շնորհիվ միայն:Պատերազմից հետո փոխեցի բժիշկ դառնալու որոշումս ու սկսեցի հետաքրքրվել SS ոլորտով: Հենց այդ օրերին էր, որ զանգ ստացա «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի նախագահ Արմեն Բայրամյանից՝ կազմակերպության նախաձեռնած ծրագրավորման դասընթացներին մասնակցելու առաջարկությամբ:*

*«ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի փորձառու մասնագետների խորհուրդներն օգնեցին ինձ հասկանալ, որ տեխնոլոգիական ոլորտում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ոչ միայն տեխնիկական գիտելիքներ, այլև նվիրվածություն, համբերություն և շարունակական զարգացման ձգտում: Այժմ ես վստահ եմ, որ ամեն նպատակի կարելի է հասնել՝ հետևողական աշխատանքի և ճիշտ ուղղորդման շնորհիվ: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի համագործակցության շնորհիվ յուրաքանչյուր զինվոր, ով հնարավորություն է ստանում սովորել և զարգանալ, դառնում է մեր հասարակության ավելի ուժեղ անդամ: Դուք ներդրում եք կատարում ոչ միայն նրանց անձնական կայացման, այլև մեր երկրի ապագայի մեջ:*

*Խորին հարգանքով և երախտագիտությամբ,*
*Ալբերտ Մեյրոյան, 03.02.202*

## *Նամակ հինգերորդ*

*Շնորհակալ ենք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ շահառուներին աջակցելու և SS ոլորտում կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու համար:*

*Ես՝ Ավագ Դալլաքյանս, ծնվել եմ 2002 թվականի մարտի 5-ին Լեջան գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո 2020 թ. հուլիսին մեկնել եմ ծառայության Հադրութի զորամաս: Պատերազմը սկսվելու առաջին պահից մեզ տարան առաջնագիծ: Առաջնագիծ չհասած՝ ունեցանք առաջին զոհն ու վիրավորները: Պատերազմի 16-րդ օրը հակառակորդի հրետանու արկի բեկորներից մեկը, խփելով սաղավարտիս, ինձ հետ շպրտեց: Ես երկու օր չէի լսում և չէի տեսնում, բայց չթողեցի հոսպիտալացնեին, քանի որ տղաները իմ օգնության կարիքն ունեին: Յավոք, իմ պայքարը երկար չտևեց: Հակառակորդի դիպուկահարի կրակոցից փամփուշտը մեջքս մտավ՝ վնասելով ողնաշարս: Սկսվեցին բուժման երկարատև վերականգնողական փուլերը, բայց նպատակը մեկն էր. եթե Աստված ապրելու հնարավորություն է տվել, ուրեմն դեռ անավարտ առաքելություն ունեմ: Այժմ երկրորդ կարգի զինհաշմանդամ եմ: Զինվորի տանը բուժվելու ընթացքում մասնակցեցի «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված մասնագիտական սեմինարին և դարձա «ՀԵՆՔ» ընտանիքի սանը: Ընտրելով «Տեղեկատվական տեխնոլոգիաների դասընթացներ» ծրագիրը՝ սովորում եմ նաև բարձրագույն մաթեմատիկա և մասնագիտական անգլերեն: Իմ նպատակն է դառնալ լավագույն մասնագետներից մեկը, ով թշնամուն կհաղթի ոչ թե զենքով, այլև միայն գիտությամբ:*

*Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ անգնահատելի աջակցության համար, որը հնարավորություն է տալիս շարունակել ապրել նորովի:*

*Թող Ձեր բարի գործերը նպաստեն ինձ պես տղաներին համարձակ նպատակների հետևից գնալ, իսկ Ձեր առաքելությունը՝ ոգեշնչի նաև այլոց:*

*Խորին հարգանքով և երախտագիտությամբ,*
*Ավագ Դալլաքյան*
*28.02.2025 թ.*

## *Նամակ վեցերորդ*

*Խորին շնորհակալություն եմ հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին անգնահատելի աջակցության համար, որը ցուցաբերում եք պատերազմի մասնակից զինվորներին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կրթություն ստանալու հարցում:*

*Ձեր համագործակցության շնորհիվ մեր հերոս տղաներն ունեն հնարավորություն ձեռք բերելու նոր մասնագիտություն և հմտություններ՝ քաղաքացիական կյանքում իրենց տեղը գտնելու համար: Սա ոչ միայն օգնում է նրանց վերահնտեգրվել հասարակության մեջ, այլև նպաստում է մեր երկրի SS ոլորտի զարգացմանը: Ես՝ Նարեկ Գրիգորյանս, ծնվել եմ 2001 թվականի ապրիլի 21-ին Երևանում: 2020թ.-ի հուլիսին մեկնել եմ ծառայության Մարտունու N զորամաս: Սեպտեմբերի 27-ին, ժամը 07:10-ին, փոխվեց ամեն ինչ միանգամից: Պատերազմ էր սկսվել, թշնամին սկսել էր օդային հարձակումը: Մենք ունեինք բազմաթիվ վիրավորներ, բայց պայքարում էինք՝ գիտակցելով, որ պետք է մեր հողը, Հայրենիքը պահենք, ինչպես մեր հայրերը: Նոյեմբերի մեկին վիրավորվեցի մեջքից, ձեռքից և ոտքից: Ինձ տեղափոխեցին Ստեփանակերտ, որից հետո՝ Երևան: Երախտապարտ եմ բժիշկներին, որ արեցին ամեն հնարավորը իմ և իմ նման տղաների համար, որպեսզի իրենց հաշմանդամ չզգան և ապաքինումն ավելի արդյունավետ լինի:*

*Հատկապես ուզում եմ ընդգծել իմ անսահման հարգանքն ու շնորհակալությունը «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի հոգեբանների, դասախոսների և անձնակազմի հանդեպ: Իրենց մասնագիտական մոտեցումն ու անհատական վերաբերմունքը յուրաքանչյուր մասնակցի հանդեպ անգնահատելի է: SS ոլորտի դասընթացների բարձր որակը և ծրագրի համակողմանի բնույթը վկայում են իրենց նվիրվածության մասին:*

*Հույս ունեմ, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աջակցությամբ կիրականան շատ ծրագրեր իմ ճակատագիրը կիսող տղաների համար:*

*Խորին հարգանքով և երախտագիտությամբ,*
*Նարեկ Գրիգորյան*
*28.02.2025թ*

## *Նամակ յոթերորդ*

*Շնորհակալ ենք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ շահառուներին աջակցելու և SS ոլորտում կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու համար:*

*Ես՝ Հարութ Գևորգյանս, ծնվել եմ 1996 թվականի հունվարի 6-ին Գորիսում: 2013-ին ընդունվել եմ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիայի համալսարան՝ մասնագիտանալով կապի միջոցների շահագործման ոլորտում: 2017 թվականին իմ մասնագիտությամբ ծառայության եմ անցել Արցախի Հանրապետության Ջրականի շրջանի զորամասում: Հենց այս զորամասում էի, երբ սկսվեց 2020-ի սեպտեմբերի 27-ի պատերազմը: 44-օրյա պատերազմի ժամանակ վիրավորվեցի թևի ու մեջքի հատվածներում: Մահը շատ իրատեսական էր, չէի հավատում, որ ողջ եմ մնացել: Այժմ երկրորդ կարգի զինհաշմանդամ եմ: «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող սոցիալական վերականգնողական և կրթական ծրագրերի շնորհիվ մենք կարողացանք ավելի արագ վերականգնվել և կյանքը նորովի վերաիմաստավորել:*

*Խորին շնորհակալություն եմ հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ անգնահատելի աջակցության համար, որը հնարավորություն է տալիս մեր քաջարի զինվորներին շարունակել իրենց կրթությունը և ծեռք բերել մասնագիտական հմտություններ: Ձեր նվիրատվությունը օգնում է մեզ վերադառնալ խաղաղ կյանքին և կառուցել մեր ապագան:*

*Թող Ձեր բարի գործերը բազմապատկվեն, իսկ Ձեր առաքելությունը՝ ոգեշնչի նաև այլոց:*

*Խորին հարգանքով և երախտագիտությամբ՝*
*Հարութ Գևորգյան*
*03.02.2025*

## Ապրող և ապրեցնող Հայի նվիրումը. Գուրգեն Մելիքյան

Մեր կյանքի ընթացքում, ես ու քույրս՝ Սյուզաննան, դեռևս մանկուց մեր ծնողների, մասնավորապես հայրիկի կողմից միշտ ստացել ենք այն դաստիարակությունը, որ պետք է մշտապես մեր առաջ դնենք նպատակներ, թեկուզ փոքր, աննշան թվացող կամ շատերի համար անէական և փորձենք հասնել դրանց իրագործմանն ու իրականացմանը: Իհարկե այն տարիներին մենք երբեմն մանկական տրտնջոցներով էինք ընդունում այդ խոսքերն ու գործելակերպը, բնականաբար ոչ խորապես ընդունելով այն: Խոսքեր և խոսքից բխած գործելակերպ, որը տարիների հետ վերաճեց սկզբունքայնության և կամային հատկանիշների հաստատուն, անխախտ ձևավորման, որ, ինչպես ինքն էր ասում.

– Չկա չեմ կարող՝ կա չեմ ուզում, իսկ, եթե մի բան շատ եք ուզում միշտ էլ կգտնեք ելքեր, տարբերակներ, մարդիկ, ովքեր ամուր կբռնեն ձեռքներդ ստեղծելով հնարավորություններ, փոխելով ձեր և՛ այլոց կյանքերը: Եվ իրապես չէր սխալվում և հիմա էլ չի սխալվում, որովհետև կան ճշմարտություններ, որոնք վավերականության ժամկետ չունեն և, որոնք հետագա ապրվելիք ողջ կյանքիդ համար դառնում են չմարող ու չմեռնող ուղենիշ:

Մեզ ճանաչող շատ մարդիկ գիտեն, որ ես ու քույրս՝ Սյուզաննան, արդեն 10 տարի է աշխատում ենք «Հույսի կամուրջ» ՀԿ Նոյեմբերյանի մասնաճյուղում: Սկզբում, որպես տարբեր ծրագրերի համակարգող–օգնականներ, այնուհետ արդեն, 2017 թ.-ից մինչ օրս՝ որպես սոցիալական մանկավարժներ:

*Հերթական դասը արդեն նոր տեխնիկայով*

Մասնագիտական, ոլորտային աջակցություն ենք տրամադրում Նոյեմբերյան խոշորացված համայնքում բնակվող հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին: 2021 թվականից մինչ օրս, աջակցություն ենք տրամադրում նաև մեր տարածաշրջան եկած ու այստեղ բնակություն հաստատած Արցախից բռնագաղթված բազմազավակ ընտանքներին:

Նեղ մասնագիտական ոլորտային աջակցությունը հաճախ կազմակերպում ենք զրույցների, քննարկումների ձևաչափով, բայց անհրաժեշտություն էր առաջանում նաև պարապմունքներն ավելի

տպավորիչ դարձնել, դիտել թեմատիկ տեսանյութեր, մուլտֆիլմեր, որը, սակայն չէինք կարող մեր ունեցած տեխնիկական միջոցի, (պրոյեկտորի) անսարքության պատճառով:

Անկեղծ կլինեմ ես ու քույրս ամիսներ շարունակ մտածել ենք, երկխոսել և ի վերջո իմ պնդմամբ, որովհետև Սյուզաննան այնուամենայնիվ տարակուսում էր չցանկանալով մարդկային անկեղծ, պարզ ու ազնիվ փոխվստահությանը հանկարծ հաղորդել ֆինանսական որևէ շեշտադրում՝ այնուամենայնիվ որոշեցինք առաջնորդվել հայրիկի սերմանած սկզբունքայնությամբ, մտածելով, որ անհաջողության պարագայում գոնե կհամարենք, որ փորձել ենք:

Քույրս դիմում գրեց՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն պարոն Գուրգեն Մելիքյանին, ով հենց առաջիկա հրավիրվելիք նիստում ներկայացրեց այն և ի ուրախություն մեզ մեր նպատակը արժանացավ հավանության և փոխանցվեց գումարը, որով օրեր առաջ գնեցինք մեզ անհրաժեշտ տեխնիկան և այսօր մեր սաների հետ ունեցանք մեր հերթական դասը արդեն հագեցած տեխնիկական նոր, այդքան սպասված միջոցով:

Հ.Գ. Երեխաների հետ զրուցեցինք բարի գործի և ընդհանրապես մեր կյանք մուտք գործող բարի մարդկանց մասին, ովքեր իրենց կյանքով դառնում են օրինակ բոլորիս համար...:

Մեր անսահման շնորհակալությունն ենք հայտնում հիմնադրամի մեծ նվիրումի համար առ Հայրենիք և ժողովուրդ: Քանզի Ձեր նվիրումը վեր է բոլոր տեսակի գործերից, քանի որ այն իրական կյանք է՝ ապրող և ապրեցնող:

*Ռուզաննա և Սյուզաննա Աղաբաբյաններ,*
*Կողբ, Տավուշի մարզ*

---

***«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ հիմնադրամի հոգաբարձության խորհրդի կազմը հաստատված 2025թ. Փետրվարի 3-ին***

***Հիմնադրամի գործադիր տնօրեն*** - Մելիքյան Գուրգեն, ԵՊՀ արևելագիտ. ֆակ. պրոֆ., Հայաստան
***Հոգաբարձ. խորհրդի նախագահ*** - Ավագյան Արծրուն, ԵՊՀ հայ բան. ֆակ, դոկտ. պրոֆ., Հայաստան
***Նախագահի տեղակալ*** - Մելիքյան Մերի, Հայաստան

***Խորհրդի անդամներ***

1. Սաֆարյան Ալեքսանդր - ԵՊՀ, պրոֆեսոր, թյուրքագիտ. ամբիոնի վարիչ, պատասխանատու քարտուղար, Հայաստան
2. Մուրադյան Սամվել - ԵՊՀ, բան.գիտ.դոկտոր, պրոֆ., հայ գրակ. ամբիոնի պատվավոր վարիչ, Հայաստան
3. Հարությունյան Սվետլանա -ԵՊՀ, արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Հայաստան
4. Միրզոյան Քնարիկ – ԵՊՀ, թյուրքագիտ. ամբ. դոցենտ, Հայաստան
5. Գրիգորյան Մարատ -ԵՊՀ, պրոֆ., Հայաստան
6. Սեփանյան Սուրեն - ԵՊՀ դասախոս, «Ապառաժ» ակումբի հիմնադիր-նախագահ, Հայաստան
7. Շմավոնյան Շմավոն-ՀՀ վաստակավոր նկարիչ, Հայաստան
8. Պողոսյան Աշոտ - ԵՊՀ, Հայաստան
9. Քեթիպեան Արա - գրող, հասարակական գործիչ, Հայաստան
10. Վարդանյան Գուրգեն -գործարար, բարերար, Հայաստան
11. Ազիզյան Սոֆի -հիմնադրամի հաշվապահ, Հայաստան
12. Կուշերյան Կատիա -բարերար, ժուռնալիստ, Հայաստան
13. Մեհրաբյան Ստելլա -հասարակական գործիչ, Հայաստան
14. Վարդանյան Արմոնդ - լիազոր ներկայացուցիչ, գործարար, բարերար, ԱՄՆ
15.Ալեքսանդրյան Իրինա, բարերար, ԱՄՆ
16.Փափայանց Շիլա, բարերար, ԱՄՆ
17. Քանյան Մերի, բարերար, ԱՄՆ
18. Բաշմակյան Հակոբ-հասարակական գործիչ, բարերար, ԱՄՆ
19. Ալաջաջյան Թերեզա-բարերար, ԱՄՆ
20. Ալադադյան Վահան-բժիշկ, բարերար, ԱՄՆ
21. Մարտին Զարեհ-բարերար, ԱՄՆ
22. Ղարիբյան Կարինե, բարերար, ԱՄՆ
23. Փիլոսյան Սիլվա, բարերար, ԱՄՆ
23. Կահվե Թոնի Շուքրի-բարերար, Մ.Բ. Միացյալ Թագավորություն
24. Նազարյան Բագրատ-գործարար, բարերար, Մ.Բ. Միացյալ Թագավորություն

25. Մահտեսի - Հակոբյանց Ռուբեն-գործարար, բարերար, Գերմանիա
26. Վանեցյան Կարեն-գործարար, բարերար, Շվեյցարիա
27. Շահնազարյան Հենրիկ-բժիշկ, բարերար, Շվեդիա
28. Բորոյան Ռաֆիկ-բժիշկ, բարերար, Շվեդիա

---

**Ծ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր**

*Մեր հիմնադրամի լավագույն բարեկամ, բոլոր շահառուների և հոգաբարձության խորհրդի սիրելի բարերար*
ՆՈՐԱՄԱՅՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ.

*Ջերմորեն ողջունում ենք Ձեզ և խորին շնորհակալություն հայտնում Հիմնադրամիս ստեղծման օրերից մեզ աջակից լինելու և բարեգործական բոլոր ծրագրերի իրագործմանը մասնակից լինելու համար:*




*Դուք լիարժեք ապրել եք Ձեր կյանքի ավելի քան ինը տասնամյակները՝ շատ բան թողնելով սերունդներին: Ձեր երջանկահիշատակ ամուսնու՝ լուսահոգի Հարմիկ Ավանեսյանի հետ միասին՝ թե՛ ազատագրված Արցախում և թե՛ նրա հայաթափումից հետո՝ Հայաստանում ապաստանած մեր հայրենակիցներին օգնելու բարեգործական գրեթե բոլոր ծրագրերի իրագործմանը նպաստել եք սրտաբուխ աջակցությամբ: Գիտենք՝ ի՛նչ բարեխղճությամբ եք հավաքում մեզ ուղարկած դրամը. Ամենաշնչի հայտնի նվիրաբերող կնոջ օրինակով Դուք Ձեր ներդրումն եք ունեցել և՛ բազմազավակ ընտանիքներին կով, կենցաղային սարքեր՝ լվացքի մեքենա, հեռուստացույց, սառնարան և այլն, տրամադրելու, ծառայունկի, հայագիտական կարևոր գրքերի հրատարակմանն օժանդակելու, անվճարունակ ուսանողների ուսման վարձ մուծելու բարեգործական ծրագրերում: Ահա՛ ստացանք Ձեր ուղարկած հերթական թանկ նվիրատվությունը, որ ծառայելու է նույն նպատակին:*

*Սիրելի և թանկագին Նորամայր, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդը և ողջ աշխատակազմը շնորհակալություն է հայտնում և դրա հետ մեկտեղ լավագույն բարեմաղթություններ հղում Ձեր բոլոր հարազատներին, բոլորին մաղթում քաջառողջություն, երկա՛ր կյանք՝ հուրախություն մեզ և ի փառս մեր հայրենիքի ու ժողովրդի:*

*Հիմնադրամի գործադիր տնօրեն՝* *Գ. Վ. ՄԵԼԻՔՅԱՆ*
*Հոգաբարձության խորհրդի նախագահ՝* *Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ*
*Պատասխանատու քարտուղար՝* *Ալ. Վ. ՍԱՖԱՐՅԱՆ*
*02.04.2025* *Երևան*

---

## Ծանոթացեք Հիմնադրամի առաջին բարերարներից մեկը՝ Քաջիկ Միքայելյանը

Երբ հեռավոր 1960-ական թվականներին ես նոր-նոր էի ընդունվել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ՝ որպես առաջին կուրսեցի ակնածանքով էի վերաբերվում բարձր կուրսերում սովորող ուսանողներին, որոնց մեջ հատկապես առանձնանում էր տղաների մի խումբ՝ Լևոն Եգեկյանը (Ջավախքից) Ռամազ Գեորգաձեն (Վրաստանից), Միքայել Բաբուրյանը (Իջևանից), Հրաչիկ Մաթևոսյանը (Լոռիից), Ռուդիկ Խալաթյանը (Քանաքեռից), Հակոբ Մուշոյանը, Մանվել Բյուսեյանը (երկուսն էլ սփյուռքից), Սեյրան Ամիրյանը (Երևանից), Գուրգեն Մելիքյանը (Պարսկաստանից), Քաջիկ Միքայելյանը (Գորիսից), և էլի մի քանիսը՝ Սուրենը, Խաչիկը ..... որոնց ազգանունները հիմա չեմ հիշում: Այսօր, ցավոք, բանասիրության ֆակուլտետում եթե ման գաս՝ մեկ երկու տղայի կհանդիպես, մինչդեռ այդ ժամանակներում կուրսերի 30-40 տոկոսը արական սեռի ներկայացուցիչներ էին, ովքեր կազմակերպում էին ոչ միայն ֆակուլտետային, այլև համալսարանական ուսանողական կյանքը, սերտ բարեկամական կապեր ստեղծում մանավանդ ուսանող-դասախոս փոխհարաբերություններում: Մենք՝ առաջին կուրսեցիներս, մանավանդ «նախանձում էինք այդ խմբի տղաների ել ու մուտը » ֆակուլտետի դեկանի Մկրտիչ Մկրյանի կաբինետ՝չլսված ու չտեսնված մի բան, մինչդեռ մենք համարձակություն չունեինք դեկանատ իսկ մտնելու:

Այդ տղաներից ամեն մեկը հետագայում դարձավ ճանաչված գիտնական, գրող, լրագրող, մտավորական, հայտնի գրականագետ ու լեզվաբան, գիտական և բանաստեղծական գրքերի հեղինակներ, իրենց կարևոր ներդրումն ունեցան մեր մշակույթի ու գիտության ասպարեզում: Բայց այս անգամ ես ուզում եմ խոսել նրանցից վերջին երկուսի՝ մեր հիմնադրամի սկզբնավորող՝ Գուրգեն Մելիքյանի և նրա առաջին բարերարներից Քաջիկ Միքայելյանի մասին: Ավարտելով Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը՝ Քաջիկն ընդունվել էր համալսարան:

Ուսումնառության տարիներին նա հատկապես մեծ հետաքրքրություն է դրսևորում հայ գրականության նկատմամբ, գրական փորձեր կատարում: Կարող էր մնալ Երևանում, գիտական թեզ պաշտպանել, սակայն չմնաց, ավարտելով կրթությունը մեկնում է իր հարազատ ծննդավայր՝ այնտեղ սկզբում աշխատելով շրջանային «Զանգեզուր» թերթում, Հալիձոր գյուղի դպրոցում (տնօրեն), իսկ հետո որպես Գորիսի քաղխորհրդի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ ապա և խմբագիր քաղխորհրդի «Բամբեր Գորիսի» թերթի:

Կարծես թե ամեն ինչ ընթանում էր իր բնական հունով՝սիրված մասնագիտություն և սիրված աշխատանք, հարազատ միջավայր և մարդիկ: Բայց ինչ որ բան նրան դեռևս վաղուց էր անհանգստացնում: Եվ ահա նա իր ողջ

էությամբ կլանվում է Գորիսում Ակսել Բակունցի տուն-թանգարան ստեղծելու սուրբ գործով:

Բակունցի տուն-թանգարան ստեղծելու անհրաժեշտությունը վաղուց էր հասունացել հայ մտավորականության մեջ: Այդ գաղափարը իրականացնողների մեջ հատկապես անուրանալի է Սերո Խանզադյանի, Համո Սահյանի, գրականագետներ Հրանտ Թամրազյանի, Էդուարդ Ջրբաշյանի, Սուրեն Աղաբաբյանի և մի շարք այլ հայտնի գիտնականների ներդրած ջանքերը: Հենց այդ մարդիկ էլ իրենց ընտրությունը կանգնեցրել են Քաջիկ Միքայելյանի վրա նկատի ունենալով ոչ միայն նրա մտավորական ունակությունները , այլև կազմակերպչական ձիրքն ու շնորքը: Իսկ գործը հեշտ չէր, հարկավոր էր մասունք առ մասունք հավաքել այն ամենը, ինչ որ մնացել էր այս կամ այն մարդկանց մոտ: Գրողի ձերբակալությունից հետո շատ բան բռնագրավվել էր ու անհայտության գիրկն ուղարկվել, վախից շատերն էլ ոչնչացրել էին իրենց մոտ եղած գրքերը, լուսանկարները, անձնական իրերը: Մի խոսքով, Քաջիկին վերապահված էր կատարել այն ծանր աշխատանքը, ինչ իրենց ժամանակին կատարել էին «Ամենուն տարեցույցի» խմբագիր Թեոդիկն (Թեոդորոս Լապճինճյան) ու «Շիրակ » թերթի խմբագիր Վահան Թեքեյանը, ովքեր հայ գրողների ու գրականության վերաբերյալ նյութեր հավաքելիս ոչ միայն խնդրում էին այս ու այն մարդուն այլև... ահաբեկում՝ հասարակական պարսավանքի ենթարկելու:

Եվ ահա 1970թ. Գորիսում հանդիսավորությամբ բացվում է թանգարանը, որի տնօրենն է դառնում Միքայելյանը՝ ծավալելով ոչ միայն գրական այլև մշակութային ու կրթական մեծ աշխատանքներ, ստեղծելով հայրենասիրական և գեղագիտական մի կենտրոն, որը շարունակում է իր գործունեությունը մինչև այսօր:

1980-ականի վերջին տարիներն էին: Արցախյան խանդավառությունից հետո զոհողությունների և ապա՝ նրա շենացման ժամանակները: Շատերն էին օգնության ձեռք մեկնում մեր ազատագրված հայրենիքի այդ եզերքին, որոնց առաջին շարքերում էր նաև «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» որը բժշկական, տնտեսական , նյութական օգնությունից զատ Բերձորում պարբերաբար կազմակերպում էր նաև ծառատունկներ, որոնց մասնակցում էին նաև համալսարանի ուսանողները: Եվ ամեն մի այցի դեպքում նրանք, որպես արդեն օրենք դարձած ավանդույթ, այցելում էին նաև Բակունցի տուն-թանգարան, որտեղ նրանց պատրաստակամությամբ ընդունում էր Քաջիկ Միքայելյանը՝ հյուրասիրում, բարեգործական նվիրատվություններ կատարում արցախցիներին հասցնելու համար՝դառնալով առաջին բարեգործներից մեկը, մեկը այն հոգիներից, որ ամբողջովին ապրում էր իր երկրի հոգսերով ու ցավերով:

Վերոհիշյալ գործունեությանը զուգահեռ Քաջիկ Միքայելյանը շարունակել է նաև ստեղծագործել, գրել հոդվածներ ու բանաստեղծություններ: Ուշագրավ են մանավանդ նրա չափածոյի ընդգրկումները՝ հայրենի եզերքի փառաբանում, բնաշխարհի գողտրիկ անկյունների պատկերավորումներ, կյանքի ու մահվան առեղծվածների վերհանումներ և այլն, որոնց մի մասը 2001թ.՝ որպես առաջին գիրք, լույս ընծայեց «Զանգակ 97» հրատարակչությունը՝ «Նժույգս մնաց» խորիմաստ վերնագրով: Վաղահաս մահը ընդհատեց Քաջիկ Դորունց բանաստեղծի ու նվիրյալ գրասերի, թանգարանագետի, բակունցասերի ու ազնիվ հայ մարդու կյանքի ընթացքը, որը նա այնքան պատրաստակամ ու շռայլորեն կարողանում էր ընծայաբերել մարդկանց: Կյանք, որ այնքան շատ էր սիրում նա և որը նրա բանաստեղծական աշխարհում ներկայանում էր որպես մի նժույգ՝ միշտ սլանալու պատրաստ, միշտ հայացքը կապույտ իր լեռնաշխարհին, որի «լուսացնցուղ հեռուներին» այնքան սևեռված էին նրա հոգու լուսավոր աչքերը:

Տեր, մի՞թե շատ եմ ապրել և մի՞թե մոտ է այդքան՝
Հրաժեշտի տրտմությունը անամոք.
Տեր, ի երկինք և ի քեզ դեռ չեմ հայցում բաղձանքով,
Քո դրախտում տնկելու չունեմ ոչ ծառ, ոչ ծաղիկ,
Դեռ քարաբույր այս հողում ունեմ այնքան անելիք:

Այս գրության սկզբում գրել ենք, որ խոսելու ենք նաև Գուրգեն Մելիքյանի մասին: Եվ անշուշտ անսպառ է նրա վերաբերյալ ասելիքը: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ բանաստեղծ Դորունցը՝նույն ինքը՝ Քաջիկ Միքայելյանը, Գուրգեն Մելիքյանին ձոնված բանաստեղծություն ունի, որտեղ նա, որպես հավերժ սիրո ու հիշատակի խոսք շատ ավելի մեծ մի հպարտություն, խնդություն, բարություն, լույս, համառություն, համբերություն, բարիքը տքնանքի, հույս-հավատ՝ ասել է՝ ամե՛ն , ամե՛ն բան ասված է, և այդ բանը գրված է շատ լավ ու այն ամենը, որ նա կտակել է ապրողներիս՝ կտակ ու նվեր է նաև նվիրել Գուրգեն Մելիքյանին, ես էլ այստեղ համառոտում եմ իմ գրությունը և խոսքը տալիս բանաստեղծին:

***Պրոֆ. Արծրուն Ավագյան***

***Քաջիկ Դորունց (Միքայելյան)***

**ՆԺՈՒՅԳՍ ՄՆԱՑ**

*Գուրգեն Մելիքյանին, 2001թ.*

Ե՛վ հին, և՛ նոր այս աշխարհից
Մի օր եթե տխուր գնամ,
Խնդությունս, որ շա՛տ էր շատ,-
Թողնելու եմ ապրողներին:
Ի՞նչ փույթ, ցավ ու դավն էլ էր շատ,
Բայց իմ տեսած,
Իմ վայելած լավն ու բարին,-
Ամենուր և ամենամոք,-
Թողնելու եմ ապրողներին:
Տե՛ր, ինձ ներիր, քո կամ գուցե մի ցնդածի
Մտացածին այն աշխարհը
Վերուստ ոչինչ եմ համարել
Եվ զոհացել քո արարած այս դրախտից,-
Մտածումիս այս լույսն էլ եմ
Կտակելու ապրողներին:

Տե՛ր, ինձ ներիր, մեղք չեմ գործի, թե ժպրհեմ՝
Դար ու դարեր քերծ ու քարեր
Փրցելով ենք ճամփա անցել՝
Տիրավորիդ արդարության կաթին կարոտ,-
Համառության, համբերության,կարոտների
Ավիշն էլ եմ կտակելու ապրողներին:
Անցավորս և՛ ընկել եմ, և՛ բարձրացել,
Կենաց իմ ծառն հաստատելով՝
Բար ու բարիքն իմ տքնանքի,
Առանց դույզն-ինչ ափսոսանքի,
Թողնելու եմ ապրողներին:
Ե՛վ հին, և՛ նոր այս աշխարհից
Մի օր եթե տխուր գնամ,
Հույս-հավատս, որ շա՛տ էր շատ,-
Որպես կտակ թողնելու եմ ապրողներին:

## ԱՐԱՐԱՏՆԵՐՈՎ

«…Քաղաքի անգույն առօրյայից հոգնած որոշեցի այցելել Շմավոն Շմավոնյանի արվեստանոց: Ամիսը մեկ-երկու անգամ նման պահա՞նջ, թե ցանկություն՝ չգիտեմ, ծնվում է մեջս…».- գրում է մեր ընկեր Սպարտակ Ղարաբաղցյանը՝ Շմավոն Շմավոնյանի «Արարատ» ալբոմի առաջաբանում:

Ես էլ այցելեցի Շմավոն Շմավոնյանի արվեստանոց՝ վաղուցվա ցանկություն էր. Վարպետի Արարտները չէին կարող անտարբեր թողնել:

Արարատներ ու ծաղիկներ: Արարատներ ու Հայաստան: Ծաղիկներ ու Հայաստան: Արարատյան դաշտ ու Հայաստան: Հայի աչքին սովոր բնապատկեր: Հայի աչքը շոյող բնապատկեր: Հայի հոգու ու զգացմունքի հետ խաղացող սիրելի բնապատկեր:

Հիշեցի, որ Սարյանը նույնպես ծաղիկներ էր նկարում, Արարատներ:

Ծաղիկներ էր նկարում Եղեռնից հետո, իր ժողովրդի արհավիրքը տեսնելուց հետո: Եվ այդ ծաղիկների մեջ լույս կար: Գուցե՝ Արարատյան լույսը: Արարատյան մարդու լույսը: Արարատյան երկրի լույսը:

Սովորական ալբոմ չէ Շմավոն Շմավոնյանի «Արարատ»-ը: Այն հիշողություն է, ձոն է, նվիրում է, ժառանգություն է, արմատներ են, նախնիների ձայն է:

Մի քանի տասնյակ կտավ, Արարատին, հային ու Հայաստանին ձոնված ճաշակավոր տողերով՝ Չարենց, Իսահակյան, Մանդելշտամ, Եվտուշենկո, Վազգեն Վեհափառ և այլք:

Լույս կա նաև Շմավոն Շմավոնյանի կտավներում: Գուցե՝ նույն լույսը:

Յուրահատուկ արվեստագետ է Շմավոն Շմավոնյանը: Նրան չի կարելի շփոթել: Նրա վրձնահարվածները չի կարելի շփոթել: Նրա կտավները չի կարելի չսիրել:

Մի տեսակ խաղաղություն կա այնտեղ, յուրահատուկ խաղաղություն, աղմուկից, ժամանակի վայրիվերումներից, ժամանակի անհանգստություններից հեռու խաղաղություն:

Շատ երազելի խաղաղություն:

Նկարչի հետ հետաքրքիր ու երկար զրույց ունեցանք հայի ու Հայաստանի, Արարատների ու Հայաստանի մասին: Հույս ունեմ՝ դրանք շարունակական կլինեն: Ես էլ գուցե՝ մեր ընկեր Սպարտակ Ղարաբաղցյանի նման պահանջ կամ ցանկություն ունենամ կրկին ու կրկին լինելու Վարպետի արվեստանոցում:

Ի վերջո՝ արվեստագետները խոսում են իրենց ստեղծագործություններով և դրանք պետք է կարողանալ տեսնել, լսել, կարդալ…

*Արայիկ Մանուկյան*

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝**
**ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ** Բան, գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝**
Ավագյան Ա.-բ.գ.դ, պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Նյութերի դասակարգումը՝ Հոգաբարձության խորհրդի անդամ՝ **Մերի Մելիքյանի**
Համարի շարվածքը, ձևավորումը՝ Ս. Մուրադյանի, Լուսանկարները՝ **Զ. Ըռքոյանի**:
Տպաքանակը՝ 99
Թերթը բաժանվում է անվճար:
**Խմբագրության հասցեն՝**
Երևան-0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ, Հեռ.: 060710617; 055-522936; 010-552537: